ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 11.12.2017թ.

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՈՐՈՇՈՒՄ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/44

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը, հիմք ընդունելով «Նորք-7» ՍՊԸ-ի կողմից 20.11.2017թ. ներկայացված բողոքը, ինչպես նաև «Ֆոտոն» ՍՊԸ-ի՝ ԳԲԽ-ԱՄ-2017/44 բողոքով որպես երրորդ կողմ ներգրավելու մասին միջնորդությունը պարզեց հետևյալը.

«Նորք-7» ՍՊԸ-ն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 20.11.2017թ. բողոքով խնդրել է դադարեցնել և (կամ) չեղյալ հայտարարել Երևանի քաղաքապետարանի կողմից սննդի փաթեթների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.11.2017թ. ժամը 09:30-ի նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով կայացված՝ «Ֆոտոն» ՍՊԸ-ին 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը և այդ որոշումից բխող այլ որոշումները:

«Ֆոտոն» ՍՊԸ-ն 30.11.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին միջնորդություն է ներկայացրել ԳԲԽ-ԱՄ-2017/44 բողոքի քննությանը որպես երրորդ կողմ ներգրավելու վերաբերյալ, որը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 30.11.2017թ. միջանկյալ որոշմամբ բավարարվել է:

Հաշվի առնելով սույն գործով «Ֆոտոն» ՍՊԸ-ին որպես երրորդ կողմ ներգրավելու հանգամանքը, ինչպես նաև վերջինիս դիրքորոշումը լսելու նպատակով նիստ հրավիրելու

անհրաժեշտությունը, Խորհուրդը ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց

«Նորք-7» ՍՊԸ-ի կողմից 20.11.2017թ. ներկայացված թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/44 բողոքի քննության ժամկետը երկարաձգել 10 օրացուցային օրով և ԳԲԽ-ԱՄ-2017/44 բողոքի վերաբերյալ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշման հրապարակման վերջնաժամկետ սահմանել 21.12.2017թ. ներառյալ:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**